

զնայ մինչ ի Կարին . . . եւ ոչ գիտեմ թէ զի՞նչ
զրգոեցին չարին սիրողքն եւ բարոյն ներ-
հակքն եւ փոշիմանեցուցին եւ անզրէն ընդ
կրունկն յետս դարձուցին» :

Մինաս կաթողիկոսի այս բարի տրամա-
դրութիւնը կարծել կու տայ թէ Մովսէս եւ
Մինաս կաթողիկոսներու մէջ կանխաւ փո-
խանակուած էին սիրոյ նամակներ : Մովսէսի
ջանքերուն հետեւութիւնը պէտք է համարիլ
1638ին Երուսաղէմ կայացած համաձայնու-
թիւնը, որուն մասին կը գրէ Սաւալանեան
(Պատմութիւն Երուսաղէմի, Ա., էջ 287—
288) . Այս տարի «Երուսաղէմ կու գայ Սիսի
Սիմէոն կաթողիկոսը՝ հետը ունենալով Ներ-
սէս վարդապետը եւ ուրիշ եկեղեցականներ :
Եւ որովհետեւ նախկին կաթողիկոսներու
օրերէն սկսեալ գժտութիւն ինկած էր էջ-
միածնի ու Սիսի աթոռներուն միջեւ՝ ձեռ-
նադրութեանց պատճառաւ, զոր կը կատա-
րէին երկու հայրապետները՝ հակառակ իրենց
յատուկ թեմական իրաւունքներուն, Գրիգոր
պատրիարք կը յորդորէ մէջտեղէն վերցնել
ատելութեան պատճառները, որոնցմով եկե-
ղեցին շատ մը անկարգութեանց կը մատ-
նուէր : Ուստի ժողով կը գումարեն ներկայ
բոլոր եկեղեցականներն ու երեւելի աշխար-
հականները : Սիմէոն իր ձեռագիրով կը խոս-
տանայ իր վիճակին չսպառկանող եպիսկոպոս-
ներ ու քահանաներ չձեռնադրել այլ եւս . նոյն-
պէս, կ'ըսէ, էջմիածնի կաթողիկոսն ալ իր